ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՊԱՐՈՆ ԱՐՄԱՆ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2026 թվականի հունիսի 05-ից մինչև 2026 թվականի սեպտեմբերի 05-ը ընկած ժամանակահատվածում իրականացված աշխատանքների վերաբերյալ

1. Մասնակցել եմ Հայաստանի Հանրապետությունում կենդանիների վարակիչ ու ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և պայքարի համալիր անասնահամաճարակային և անասնաբուժասանիտարական միջոցառումների, անասնաբուժական գործունեության, գյուղատնտեսական կենդանիների հաշվառման և համարակալման, արհեստական սերմնավորման, բոնիտավորման, տոհմային գործի, տոհմանյութի արտադրության, կենդանիների սպանդի նկատմամբ պետական վերահսկողության, սերոմոնիթորինգի աշխատանքների իրականացման գործընթացների վերահսկողության, այդ գործընթացների արդյունքների վերլուծության աշխատանքներին:

2. Իրականացրել եմ հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող անասնաբուժական ենթահսկման ապրանքների երթուղու տրամադրման, այլ երկրների լիազոր մարմնի պահանջով ներմուծվող, արտահանվող, տարանցիկ փոխադրվող անասնաբուժական ենթահսկման ապրանքների համար թույլտվությունների տրամադրման և մասնակցել եմ գործընթացի նկատմամբ վերահսկողության աշխատանքներ:

3. Մասնակցել և իրականացրել եմ կենդանիների պահվածքի, անասնապահական շինությունների շահագործման վերաբերյալ խորհրդատվության տրամադրման աշխատանքները, կենդանիների պահվածքի անասնապահական շինությունների զոոհիգիենիկ և անասնաբուժասանիտարական նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողության աշխատանքներ:

4. Մասնակցել եմ Հայաստանի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական միության անդամ մի պետություն փոխադրվող, Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող անասնաբուժական վերահսկման (հսկողության) ենթակա ապրանքների

արտադրություն, վերամշակում և (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների և անձանց ռեեստրում գրանցման աշխատանքների կազմակերպմանը:

5. Իրականացրել եմ անասնաբուժության բնագավառի կարգավորող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծերի նախապատրաստմանն աջակցության ցուցաբերման աշխատանքները:

6. Մասնակցել եմ անասնաբուժության բնագավառում Տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին:

7. Մանր եղջերավոր կենդանիների արտահանման նպատակով իրականացրել եմ այցելություն կարանտինային կետեր՝ կենդանիների կարանտինացման գործընթացի, սահմանված անասնաբուժասանիտարական պահանջների պահպանման և համապատասխան փաստաթղթերի առկայության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով:

8. Եռամսյակի ընթացքում անմիջական ղեկավարի հանձնարարությամբ իրականացրել եմ անասնաբուժության վարչության կանոնադրությունից բխող աշխատանքներ:

ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱԳԵՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ